Ըստուած վճռից ի վերուստ խառնիլ միմեանց արիւնները,
Ընդհօք մարդիկ մահաճո՞ն, առնե՛ն իւրեանց օրինակ,
Մեր նախահարց խրատները լինի՞ նոցա ընդունակ։
Ձարն չարաւ կործանի, իսկ գործ բարին չկորի.
Մարդոյս ամեն արածն միշտ իւրեանց վարձ կ՚ինի։
Ո՞փոխեցին այս տողեր լքուին տուին իմ արեանց
Յառաջ չերթար գրիչս, կդոչէ

Մ. ՓԱՇԿԵՒԱՆՑ.

Ի ԹԻՖԼԻՍ։

ԱԶԳԱՅԻՆ

Ի ԲԱԳՈՒ ՓԱՂԱՓԷ.

Մշակի 7րդ թուոյն մէջ պատահեցի նա և այս յօդուածին, «ամբողջ Թիֆլիսի Հայ հասարակութեան և երևի Կովկասեան և այլ դաւառական Հայաբնակ քաղաքների խօսակցութեան առարկայ էր վերջին օրերը Ըշաբաթ ամսագրի Դեկտեմբերի տետրակում տպուած Կոնդակը»։ Յօդուածագիրը որոշ ոչինչ չէ խօսում այն մասին, թէ արդեօք ի՞նչ պատճառաւ է այդ Կոնդակը Հայերի համար խօսակցութեան առարկայ դարձել։ Եթէ նա խօսակցութեան առարկայ է դարձել այս խօսքերիս համար՝ «անտաբակուսելի ի՞նն ճշմարտութիւն և բազմատեսակ օրինակօք հաւաստեալ վկայութիւն է այն, զի ի թուլանալ որ և է ազգի ի հաւատոյն՝ անխուսափելի եղեւնակաւ զկետ գայ նաև մայրենի լեզուի խանգարուին»։ Սորա ճշմարտութեան մասին ոչ միայն հին և նոր պատմութիւնները, այլ և տեղիս ամբողջ Հայ հասարակութիւնը և երևի Կովկասեան և այլ դաւառական Հայաբնակ քաղաքները վկայում են, որ ազգութեան և լեզուի հիմն՝ կրօնն է. վասն զի մարդոյս հոգին՝ միտքը պահանջում է ունենալ մի հաւատ, մի կրօն և մի Ըստուածպաշտութիւն. և իւր ընտրած և համոզուած կրօնի համար՝ նա պատրաստ է զոհել ոչ միայն ամենայն բան, այլ և իւր անձը, որոյ օրինակները շատ և շատ են։ Իսկ նա, որ Պ. յօդուածագիրը ասում է՝ «ի՞նչ կապ կայ հաւատի և լեզուի մէջ, մենք չենք պաշտպանի այն մարդկանց, որք Եւրոպայում այժմ բաւական բազմացել են՝ որք և հպարտութեամբ ասում են, թէ ոչ ինչ հաւատ չունին ևքն։ Այն մարդը, որ չի ընդունում ոչ մի հաւատ, այն մարդը և չի ընդունում ոչ մի ազգ։ Կան շատ որդիք, որ ոչ միայն չեն ընդունում իւրեանց ծնողներին, այլ և ծեծում են նոցա, այդպիսեաց լեզուն էլ չի պատկանում իւր մայրենի լեզուին, վասն զի դոքա ամեն ազգի մօտ ձևանում են նոյն ազգի զաւակ, Մահմետականաց մօտ՝ Պարսկերէն խօսելով՝ լինում են Մահմետական, Հայի մօտ՝ Հայ, Գաղղիացոց մօտ՝ Գաղղիացի ևքն։ Ըսացի, որ բանական մարդը պիտի անշուշտ ունենայ

մի հաւատա, իսկ այն մարդիկը՝ որք հպարտութեամբ չեն ընդունում ոչ մի հաւատա, ոչ մի կրօն՝ ուսոի և նոքա ընդունում են հաւատով անկրօն-ին-ը, իսկ ազգաւ էսկիմո-ին-ը: Այսպիսիք իրաւամբ անուանւում են օրդիք անկրօնին և զաւակք էսկիմո-ին: Մինք չենք կարող վայելել այսպիսի բարձր տիտղոսը, ով որ ցանկանում է այդպիսի տիտղոսի՝ թող առաջ գայ և յայտարարութեամբ ասէ՝ ես հաւատով անկրօն եմ և ազգաւ էսկիմո:

Յօդուածագիրը աւելի հաստատելոյ համար իւր կարծիքը՝ դիմում է դէպի պաշտպանութիւն մի քանի անհիմն պատմաբանական փաստերի, ,, Հայերի մայրենի լեզուն Հայերէն էր, մինչև որ Հայերը կրակապաշտ էին. նրանց մայրենի լեզուն դարձնալ ճնաց Հայերէն, երբ նոքա ընդունեցին քրիստոնէութիւնը, ևն. ևն ,,: Այժ Հայերը կրակապաշտութեան ժամանակ հասկանում էին կրօնական լեզուն, Հայերէն լեզուն, բայց երբ քրիստոնէական լոյսը ծագեց նաև Հայերի մէջ, Հայերը պարտաւոր էին Հայ լեզուաւ հասկանալ աւետարանը, բայց նոքա եկեղեցում աւետարանի վերջաբան ձայնը երբեմն լսում էին Յունարէն լեզուաւ և երբեմն Ասորոց լեզուաւ: Հայոց եկեղեցոյ կրօնական խորհուրդները, ժամերգութիւնները, ծիսակատարութիւնները լրիւ Հայերէն էին կատարվում, ուսոի Հայերը չէին կարող օգուտ առանձնալ աւետարանից՝ այն էլ քրիստոնէութեան առաջի դարուց ընկզուում: Ա. Լուսաւորիչը տեսնելով այս՝ սկսեց ուսումնարաններ բանալ, որ տեղ Հայ մանկունքը սովորեցին Յունաց լեզուն և Յունաց լեզուաւ հասկացան Սուրբ Գիրքը: Այսպէս Յունաց լեզուաւ ոչ միայն սկսուեց Հայերի մէջ գիր և գրականութիւնը, այլ և խօսակցութիւնը: Քրիստոնէական կրօնը շատ օգտաւոր է, նորա հետևողը՝ ոչ միայն պատրաստ է զոհել դորա յաւաջադիմութեան համար՝ ամենայն ինչ, այլ և կիանք՝ եթէ հարկաւոր է: Հայերն էլ առնելով քրիստոնէական կրօնի ճաշակը՝ սկսեցին սմանայն բան և իւրեանց անձինքները դնել քրիստոնէական սուրբ կրօնի վերայ: Այսպէս՝ կրօնի զօրաւոր ազդեցութեամբը ծագկելով Հայաստանում Յունաց լեզուն՝ սկսեց օրէցօր անհետանալ մայրենի լեզուն և անհետացած էլ կլինէր՝ եթէ այս բանիս, թէ և շատ ուշ՝ դեղ և դարման չգտնէր հրանելի, էլի հոգևորական, Մեսրոպը: Նա երբ Մեսրոպեան գրերը հնարեցաւ, հին և նոր կտակարանը և ուրիշ շատ մատեաններ թարգմանեցան Հայոց լեզուաւ, Հայ մանուկները ուսումնարաններում սկսեցին կարդալ մայրենի լեզուն, աւետարանի ձայնը և ժամերգութիւնը լսեցաւ մայրենի լեզուաւ. այն ժամանակ սկսեցին խոքր առ փոքր Հայերը ճանաչել կրօնի հետ ազգութիւն և լեզուի նշանակութիւնը: Ի հարկէ, եթէ մի փոքր էլ ուշացած լինէր Հայոց գրերի կատարելագործութիւնը, Հայերը այժմ անշուշտ պիտի մոռացած լինէին ազգութիւն և լեզու, Յունաց լեզուաւ կը կրթուէին, Յունաց լեզուաւ կխօսէին և կգրէին, Յունաց լեզուաւ կաղօթէին ևն. ևն: Արդեօք էլ ինչով կմնային

Հայ: Այսպէս մեր ազգութեան և լեզուի հիմն նաև քրիստոնէական կրօնն է:

Ամեն գար ունեցել է իւր նշանակութիւնը: Ուրիշ էր Հայկի գարը, ուրիշ էր Տիգրանի գարը, ուրիշ էր Յազկերտի գարը, ուրիշ է և այժմեան գարը: Այժմ խաղաղութեան և աշխատասիրութեան գար լինելով... էլի տեսնում ես՝ հասկանութեան ձևով՝ փոքր առ փոքր լեզուի խարխափը շարժուած, Հայերից ամենք իրրև պարծանք՝ օտարի լեզուներով խօսում, օտար լեզուներով գրում, օտար ազգի իմաստասիրաց և քաջերի անուններով պարծենում, երբ ամենը իւրեանց մէջ կայ և գանվում է: Այժմ եթէ այսքան անկարգութիւն է ծագում, տես թէ ծրքան անկարգութիւն կծագուի՝ օտար լեզուաւ՝ նոր քրիստոնէական կրօնը մտանելոյ ժամանակ՝ մի մեզանման գաւառների մէջ:

Իսկ եթէ խօսակցութեան առարկայն Հայերի մէջ, յօդուածագրի կարծիքով, այս է՝ «Հայոց եկեղեցին, որ միշտ ազատ էր, ունէր արդէն գարերով հաստատուած կանոնները, արդեօք ի՞նչ հարկաւորութիւն կար նոր կանոնների մէջ, որք կարող են ծանր երևալ ժողովրդի համար», թող որ այն և աւելի կանոններ իննախնեաց հաստատուած կան, որք ի ներկայս ի չիշողութիւն բերելոյ համար կրկնուել են. այն առաքելագիրը և հայրապետական պատգիր պարաք է եկեղեցւոյ հովիւներին միայն, որ ըստ պատշաճին և յարմարութեան, կանոնական խրատել, յորդորել և մխիթարել իւր յանձնուած հօտին: Այս սովորութիւնը շարունակաբար տեսած է մինչև յայժմ մեր Հայրապետաց մէջ, և եթէ այսպիսի խրատական կանոնները ժողովուրդը քիչ է սատնում, ես շատ անգամներուս ծանօթ եմ հասարակութիւնից դժգոհութիւն և տարաձայնեալ այս մասին՝ «մենք տեսել ենք, որ Թուղիկոսն տարին մի քանի անգամ մեծ պատին, կամ մի նշանաւոր օր կոնդակ կուղարկի և կխրատէ, կը յորդորի ժողովուրդը դէպ ի բարին, այժմ այդ էլ չկայ»:

Այժմ ո՞վ հետաքրքրասէր կաթուղիկոսն ազգիս, լինելով արթուն հովիւ և բարեխիղճ Հայր, տեսնում է, որ իւր որդիքը դարերով հաստատուած կանոններից, լեզուից և ազգութիւնից, օրէցօր տգիտանալով, գնում համարձակաբար բաժանուել են ուղում, «Հայր տուր ինձ բաժին, որ անկանի չընչիցդ», ասելով, ցաւում է, որ դոքա փոխանակ իւրեանց հայրական տանը նստելոյ և ժառանգելոյ իւր հրաշալի նախնիքներից թողած ժառանգութիւնը, նոցա ազգ սրբազան յատկութիւնները, նոցա հրաշալի առաքինաշաւութիւնը, շատ անյարմար գործողութիւններով է պարապած, ուստի իրրև յարմար միջոց, լաւ է համարում կոնդակաւ, հայրաբար խրատելով, յորդորելով ցոյց տալ մեզ մեր որդիական պարտքը, որոյ մասին ժողովուրդն մեծ ուրախութեամբ համակրելով՝ ցոյց տուաւ իւր խորին շնորհակալութիւնը, և այսպէս ընդունելութեան արժանի առարկայ դարձաւ յիշեալ կոնդակը մեր ազգի մէջ՝ և ոչ՝ ինչպէս կարծում է յօդուածագիրը՝ պարսաւանաց:

ՎԱՀԱՆ ՇԱՀՈՒՆԵԱՆՑ.

Ի Բ...